

ԱՅՎ ՋԱՐԲԱՏԸ

Սա Թումանյանն է.

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չտեսնըված մինչ էսօր,
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր:
Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր:

Իսկ այս ահա Թումանյանը չէ - Ջահրատն է.

Բանաստեղծին հետ միատեղ ճամբայ կ'ելլենք երգելու
Ինքը կ'երգէ - մենք երգելու պես կ'ընենք...

Բանաստեղծներս իհարկե աստվածային հնչումի ձայնագրիչը,
աստվածային տեքստի ընթերցողը, աստվածային գրի՝ որ է ամ-
բողջ աշխարհը՝ վերծանողն ենք, և հարկ էր, որ Աստծո տեքստի
թումանյանական ընթերցումը ունենար իր տարրընթերցումը՝ նվազ
ոգեշունչ, նվազ բարձրից ու երկնային, առավել երկրային, և այդ
տարրընթերցումը իր ասացողին գտնելու էր իհարկե արևմտա-
հայերենում ու Պոլիս, ուր իշխանական մեր բարձր քիթը լավա-
գույնս էր տրորվել:

Այս երկնքի տակ ազգովին որևէ նշանակելի ներկայություն
լինելու գայթակղությունից այլևս թոթափված, սեփական որևէ
երկրի ու տերության և կամ որևէ առաքելության զորությամբ
չդրոշմված և այդքանով բաց երկնքի տակ նյարդերը մերկ և
այդքանով աչքերն ու ունկերը մաքուր՝ իհարկե Հայ գրակա-
նության Պոլսո մեր որդին էր երկիրը մրջնանոց և մեզ անանուն
մրջյուններ տեսնելու, իհարկե Ջահրատն էր լինելու արարածի
մեր շշուկն ու լուռ վարքը, մեր գրականությունն իհարկե նրանով
էր ներկայելու փոքր ու մեծ մարդուն, փոքր մեծ մարդը մեզանուն
սիրելի էր լինելու Ջահրատով: Ո՛չ Չարենցով, ո՛չ Սևակով, ո՛չ
մերազնյա կամ այլազգի ուրիշ որևէ մեկով - միայն Ջահրատով:

Հիանալի է, որ Հայ գրականության դադարած ու դադարած
սիրտը, Պոլիս, շարունակեց բաբախել Ջահրատի ջերմ շնչի ներ-
քո, հիանալի է, որ Հայոց լեզուն նորօրյա բանաստեղծության
անդաստանում չպապանձվեց - խոսեց, հասկանալի ու սիրելի
եղավ Ջահրատով: